վերայ յուսոյ քոյ և համարեա թէ այս ամենայն 'ի վերայ քոյ կատարի և զամենայն զոր ի սմայ զրեցեալ վարձ գործոց ձեռաց քոց՝ քեզ հատուցանելոց է, յայնժամ յայտնի քեզ լինիցի զի զամենայն զոր ինչ 'ի յայսմ կանոնիս գտանես բոլորովին բարի գոլ կարէ, և հաճոյ կամաց քոց լինիցի, ըստ բանին Տեառն որ ասաց, որ 'ի քեզ չար թուի ընկերին ձերոյ մի՛ առնիցուք, և եթէ դու բնութեամբ բարի և յօրէնս քեզ թուեսցի բարի, և դու կարես հաւատալ զի ամենայն արանց բարեաց թուելոց է բարի, նա՛ և հարկաւոր է իմ ասել զայս որ նոյն կանոնք, որ 'ի սմայ զրեցեալ երբեմն բոլորովին չար թուի 'ի առն չարագործի, նոցայ որ անառակութեամբ և 'ի գոռոզութենէ հպարտութեամբ բազմիցս յեղին արիւն արդար և զինքեանք խոյս տալով փրծան 'ի սատակմանէ, այսպիսի չար և վատթար արանց յոյժ ծանուր թուի հատուցանել ակն ընդ ական և ատամն ընդ ատաման, այլ եթէ ոչ հատուցից վարձ գործոց ձեռաց մերոց բարեաց և չարեաց շաղախի երկիր անօրէնութեամբ և քայլ քայլի տապալի բնակութիւնք, և կատարումն այս լինի որում այժմոյս 'ի միջի կամք, ուրեմն ով ոք բարեգոյնք և արք բարեմիտք մինչ ոչ յուսան ստանալ պատուղ գործոց ձեռաց իւրոց, զի արդ՝ կարէ մարդ ընթանալ 'ի գործ և աշխատիլ և գործիլ բարի, նոյն գունակ ով ոք չարագործ